ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 11.03.20թ. կայացած թիվ 9.19-20 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 26-ը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի կողմից ներկայացված «Բարձրամոլեկուլային միացություններ» դասագիրքը (հեղինակ՝ պրոֆ. Վ.Գ. Բարխուդարյան) ֆիզիկայի ֆակուլտետի մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի մասնագիտական առարկաների համար ուսումնական ծրագրերում ընդգրկելու նպատակահարմարության քննարկում և հաստատում:
2. Վ.Համբարձումյանի անվան ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի դեցենտ Հ.Բաղալյանի (ղեկավար) «Բնակչության էլեկտրամագնիսական անվտանգության ապահովումը» թեմայով ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ երկակի նշանակության ծրագրերի մրցույթին մասնակցության հայտի երաշխավորում:
3. Օպտոէլեկտրոնիկայի և ֆոտոնիկայի գիտահետազոտական լաբորատորիայի ավագ գիտ. աշխատող Աշոտ Մելքոնյանի (ղեկավար) «Երկակի նշանակության արևային ջրատաքացուցիչ» թեմայով ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ երկակի նշանակության ծրագրերի մրցույթին մասնակցության հայտի երաշխավորում:

Նիստը վարեց ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ռ. Հակոբյանը:

Ելույթ ունեցավ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը: Նա ներկայացրեց «Բարձրամոլեկուլային միացություններ» դասագրքի (հեղինակ՝ պրոֆ. Վ.Գ. Բարխուդարյան) վերաբերյալ ֆիզիկայի ֆակուլտետի մեթոդական խորհրդի եզրակացությունը:

Ելույթ ունեցան Հ. Բաղալյանը և Ա. Մելքանյանը և ներկայացրեցին վերոհիշյալ նախագծերի բովանդակությունը և նպատակները:

Քննարկումից հետո **որոշվեց՝**

1. Հաշվի առնելով ֆիզիկայի ֆակուլտետի մեթոդական խորհրդի եզրակացությունը՝ երաշխավորել Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի կողմից ներկայացված «Բարձրամոլեկուլային միացություններ» դասագիրքի (հեղինակ՝ պրոֆ. Վ.Գ. Բարխուդարյան) ընդգրկումը ուսումնական գործընթացում՝ որպես մասնագիտական առարկաների համար նախատեսված հիմնական դասագիրք մայրենի լեզվով և դրա տպագրությունը ԵՊՀ տպարանում: (26 կողմ)
2. Երաշխավորել Հ.Բաղալյանի հայտի մասնակցությունը ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ հայտարարած «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության (2020)» մրցույթին (25 կողմ, 1 ձեռնպահ):
3. Երաշխավորել Ա. Մելքոնյանի հայտի մասնակցությունը ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ հայտարարած «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության (2020)» մրցույթին (25 կողմ, 1 ձեռնպահ):

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝ Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝ Հ.Հ. Հովհաննիսյան